Ես նման բան չէի լսել ողջ կյանքում: Սա կարճման ենթակա գործ է, մահացած մարդու նկատմամբ ինչ պետք է անեն, ես չեմ հասկանում... Ինչ կարող են մահացած մարդու հետ կապված փնտրել, աբսուրդ է, ոչ իրավաչափ է, հասկանում եք՝ ինչ աստիճան աբսուրդի հետ գործ ունենք: Եթե մարդը մահանում է, գործը չի կարող նորից բացվել:

Կարդացեք՝ էջ 4

Ինչո՞ւ է Ռուսաստանում հայկական ապրանքը վաճառվում՝ մեր գինիները, հանքային ջրերը, կոնյակը ռուսական շուկայում հայտնի են եղել խորհրդային տարիներից, դրանք ներկայացնելու կարիք չկա: Ռուսաստանում կոմպակտ ապրող հայկական համայնքներ կան, կան հայկական խանութներ, հայկական արտադրանքի հիմնական սպառողը հայերն են:

Կարդացեք՝ էջ 5

Մարզիկները զարմացած էին, որովհետեւ որեւէ քաղաքակիրթ երկրում նման բան չես տեսնի: Իրենց համար աբսուրդ էր այդ վիճակը, մարզիկին մի 5 րոպե ժամանակ են տալիս՝ շորերը, անձնական իրերը հավաքելու, ու օտար երկրից եկած մարզիկն անորոշ վիճակում է հայտնվում: Ինչ մեղավորություն ունի այս պատմության մեջ մարզիկը:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 117 (4252), 15 հուլիս, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Իշխանությունը Կոտայքի մարզում մարզպետացու է փնտրում ու չի գտնում: Բանն այն է, որ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը, որն այս օրերին արձակուրդն է վայելում արտերկրում, մի քանի այլ մարզպետների հետ, ցանկանում է ԱԺ գնալ՝ պատգամավորի «խախանդ» գործով զբաղվել: Իհարկե, նրա ցանկանալը շատ քիչ է, քանի որ ՔՊ-ականների «ճակատագիրը» կախված է մեկ անձից, եւ այդ անձը Փաշինյանն է: Նա է որոշում՝ ով, երբ եւ ինչ պաշտոն կզբաղեցնի: ԱԺ է գնում նաեւ ԵԿՄ ղեկավար Սասուն Միքայելյանը, ավելին՝ անգամ հավակնում է ԱԺ պաշտպանության հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնին: ԱԺ պատգամավորի մանդատից հրաժարվելու մասին օրերս դիմում է ներկայացրել ՔՊ-ական Վաղարշակ Հակոբյանը: Իսկ ՔՊ պատգամավոր Լիլիթ Ստեփանյանն այս օրերին ո՛չ խոսում է մանդատից հրաժարվելու, ո՛չ էլ մանդատ վերցնելու մասին: Մարզում խոսում են, որ եթե Փաշինյանը որոշի, որ Ահարոն Սահակյանն ԱԺ է գնալու, ապա Կոտայքի մարզպետի պաշտոնին հնարավոր է նշանակի Լիլիթ Ստեփանյանին, որն ընդդիմության դեմ գրած ստատուսներով ու ելույթներով կարծես թե նվաճել է Փաշինյանի սիրտը, իսկ Վաղարշակ Հակոբյանի հետ կապված՝ Փաշինյանը որեւէ որոշում չունի, քանի որ նրան մարզում, առավել եւս իր ծննդավայր Ծաղկաձորում, չեն սիրում եւ չեն ընդունում: Բայց նա շինարարության մեջ է խրված, ուստի կարող է նաեւ որեւէ պաշտոն չզբաղեցնել:

Հունիսի 7-ի ընտրություններին ընդառաջ, իշխանությունը Հայաստան ժամանող զինծառայության տարիքի ՀՀ քաղաքացիներին հենց օդանավակայանում 25-օրյա վարժական հավաքների մասնակցելու ծանուցագրեր էր հանձնում՝ փորձելով կանխել արտերկրից մեր հայրենակիցների մուտքը Հայաստան եւ կասկածելով, որ գալիս են ապազգային իշխանություններին մերժելու համար: Ընտրություններն այլեւս անցյալում են, սակայն, մեր աղբյուրի փոխանցմամբ, ԱԱԾ եւ ռազմական ոստիկանության աշխատակիցները մինչ օրս հերթապահում են «Զվարթնոց» օդանավակայանում եւ ծանուցագրեր են հանձնում անգամ մեկ շաբաթով, մի քանի օրով թաղման կամ հարսանիքի ժամանող մեր հայրենակիցներին: Եղել են դեպքեր, երբ մարդը տեղեկացրել է, որ առողջական խնդիրներ ունի, սակայն՝ ապարդյուն: ՊՆ աղբյուրներից տեղեկացանք, որ պլան է դրված՝ պոստ պահողների պակաս ունեն, որը լրացնում են նման ռեյդերով՝ դրսից եկողների հաշվին:

Ով է ասում

Ոչ ոք չի ասում, որ հանցագործությունները չպետք է բացահայտվեն, եւ հանցագործները չպետք է պատժվեն: Բայց քաղաքական հայտ ներկայացրած գործչին վարչապետի հրահանգով կալանավորելը հանցագործություն բացահայտել չէ, այլ՝ հաշվեհարդար: Ոչ ոք չի ասում, որ քաղաքականության տանիքի տակ կարելի է պատսպարվել եւ օրենք խախտել, բայց նաեւ չի կարելի պետության տանիքի տակ մտած՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահել եւ Սահմանադրությունը ոտնահարել, ինչպես շարունակաբար անում է Նիկոլ Փաշինյանը: Ոչ ոք չի պահանջում, որ հատուկ ծառայությունները չգործեն, պետական բարձրաստիճան պաշտոնյայի կարգավիճակ ունեցող անձինք օրենքով սահմանված կարգով չպահպանվեն, բայց այդ պահպանությունը չի կարող հասնել աբսուրդի, այդ պահպանության միջոցները չեն կարող գերազանցել պետական սահմանների պահպանմանը: Չի կարող մի ողջ հասարակություն մնալ անպաշտպան, իսկ մի քանի անձի կյանքը զօրուգիշեր պահպանվել: Ոչ ոք չի ասում, թե նախաքննության մարմինները չպետք է աշխատեն՝ խուզարկություններ կամ ձերբակալություններ չպետք է անեն, բայց դրանք չպետք է արվեն օրենքի խախտմամբ, մեծ թվով անձանց իրավունքները եւ մարդու արժանապատվությունը նվաստացնելու ճանապարհով, որպեսզի իշխանության ղեկին հայտնված անձի սրտին «մի մատ յուղ նստի»: Ոչ ոք չի ասում, թե օրենքով սահմանված քննչական գործողությունները չպետք է իրականացվեն, բայց ինչպե՞ս կարող են մարդու հոբբին դիտել որպես իրեղեն ապացույց ու առգրավել, նրա սիրելի կենդանիներին խլել-տանել-ոչնչացնել, ավելի վատ պայմաններում պահել, որպեսզի նրան ցավ պատճառեն: Ինչպե՞ս կարող են տասնյակ ընկերություններ փակել, կապարակնքել, հազարավոր մարդկանց զրկել ապրուստի միջոցից, որովհետեւ նման ապօրինի հրահանգ են ստացել վերադասից:

Երեւան-Ճամբարակ հանրապետական նշանակության ավտոճանապարհի Աղբերք-Ճամբարակ հատվածում՝ մայրուղու մոտ 250 գծամետրն ամբողջությամբ քանդված է: Այդ տեղանքում ավտոմեքենաները շատ դանդաղ են շարժվում, վարորդները վախենում են, որ կվնասեն իրենց մեքենաները: Հայտնի չէ, թե ինչն է քանդվելու պատճառը, գուցե՝ հողի սողանքը: Ավտոճանապարհը շատ բանուկ է, այդ ճանապարհով է անցնում Բերդ համայնքից Երեւան, մայրաքաղաքից Բերդ մեկնողների բացարձակ մեծամասնությունը, երբ երթեւեկում են Բերդ-Նավուր-Թթուջուր-Ճամբարակ-Երեւան երթուղով: Քանդված հսկա հատվածը հրատապ հիմնանորոգման կարիք ունի:

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ՌԵԺԻՄՈՒՄ ԵՆ ՊԱՀՈՒՄ

Բոլորը գիտեն, որ նախնական կալանքը՝ առանց դատարանի վերջնական դատավճռի, մեզանում կիրառվում է որպես պատիժ, հատկապես՝ Նիկոլ Փաշինյանի քաղաքական հակառակորդների, նրան քննադատողների, ընդդիմադիրների նկատմամբ: Սակայն պարզվում է՝ մարդկանց կալանավորելով, բանտ ուղարկելով էլ հաճախ չեն բավարարվում, կալանքը կրելու պայմաններն էլ տարբեր մարդկանց համար տարբեր են: Նախ, խցերն են տարբեր. քաղբանտարկյալներին, որպես կանոն, վատ խցերում են պահում, որտեղ շատ մարդիկ կան, երբեմն՝ ծանր քրեական հանցագործներ: Եթե սովորական քրեական հանցագործների համար թույլատրված է խցում սառնարան, հեռուստացույց, կոնդիցիոներ, հարմար մահճակալ ունենալ, ապա քաղաքականների դեպքում հաճախ արգելված է: Սամվել Կարապետյանին, օրինակ, ամռանն արգելել են հովացնող որեւէ սարք փոխանցել, իսկ ձմռանը՝ նույնիսկ վերմակ, երբ խցում զրոյին մոտ աստիճան է եղել, եւ կալանավայրն էլ մինչեւ դեկտեմբերի 10-ը չեն ջեռուցել: Գագիկ Ծառուկյանի դեպքում նախորդ կալանքի ժամանակ նրա չափերից երկու անգամ փոքր մահճակալի վրա են ստիպել քնել, ինչն ուղղակի անհնարին է եղել: Կարծում ենք՝ հիմա նույնն է: Բոլոր քաղբանտարկյալների տեսակցությունները քննիչի կամ դատավորի որոշմամբ, որպես կանոն, արգելվում են (Արեգնազ Մանուկյանի դեպքում նույնիսկ անչափահաս զավակի հետ են արգելել), պատգամավորների այցելություններն էլ են փակում, եւ միայն փաստաբանն է կարողանում այցելել, որ հոգեբանորեն ինչքան հնարավոր է՝ մարդն ընկճվի: Այս լրացուցիչ պատիժները սահմանվում են վերեւից: Կալանավայրի ադմինիստրացիան եւ քննիչները պարբերաբար «զոհին» տեղեկացնում են, որ դա «առաջին դեմքի անձնական ցուցումով» է արվում:

ԵՐԿՈՒ ԱՎԱԶԱԿ ՆՍՏԵԼ՝ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՆՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԵԼ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ՝ ԻՐ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՄԲ

*«Հրապարակի» զրուցակիցն ադրբեջանագետ **Արմինե Ադիբեկյանն** է:*

- Մինչ Փաշինյանը վերջին տարիներին պնդում է, որ Արցախի հարցում միջնորդների որեւէ առաջարկով չէր երաշխավորվում Արցախի սուբյեկտայնությունը, Ալիեւը երեկ հայտարարություն է արել՝ պնդելով ճիշտ հակառակը. «Մինսկի խումբը միայն ուզում էր վերցնել Ղարաբաղը՝ ներառյալ Լաչինն ու Քելբաջարը, ու տալ Հայաստանին: Երբ ղարաբաղյան երկրորդ պատերազմը սկսվեց, աշխարհի երեք առաջատար երկրները պահանջում էին անմիջապես կանգ առնել, զանգում էին, վախեցնում ու սպառնում էին: Ուզում էին, որ մենք կանգ առնենք, որ ամեն ինչ մնա նույնը: Նպատակը՝ որ Ադրբեջանը չվերականգնի իր տարածքները: Այդ նպատակը չիրականացավ»: Ստացվում է, որ Մինսկի խումբն Արցախը, դեռ մի բան էլ ավելին, փորձել է պահել հայկական, իսկ Փաշինյանը հակառակն էր պնդում:

- Երկու ավազակ նստում են եւ փորձում են նույն պատմությունը պատմել, բնականաբար, ամեն մեկն իր պատկերացումներն է ներկայացնում՝ իրականության հետ կապ չունեցող: Նիկոլ Փաշինյանը ոչ մի տեղեկություն չունի եւ չի էլ ուզում իմանալ, թե բանակցային գործընթացներն ինչպես են ընթացել: Դժվարանում եմ ասել՝ նրա տգիտությո՞ւնն է մեղավոր, թե՞ կամքի բացակայությունը, սակայն այս մարդն իշխանությունը վերցնելուց հետո առնվազն երեք-չորս ամիս պետք է հատկացներ՝ 25 տարվա բանակցություններն ուսումնասիրելու, համապատասխան փաստաթղթերը կարդալու, ուսումնասիրելու: Իհարկե, նա ոչինչ չի արել այս ուղղությամբ եւ որեւէ գիտելիք չունի, դրա համար էլ հայտարարեց, որ բանակցությունները սկսում է իր՝ զրոյական կետից, եւ պնդեց, որ ինչ ուզի, այն էլ կբանակցի: Իրեն թվաց, թե իր արածը շատ ավելի խելացի քայլ է, քան նեղ մասնագիտացված պրոֆեսիոնալների 25-ամյա աշխատանքը: Այս մարդը խոսում է այնպիսի բաներից, որոնցից չունի տեղեկություն: Միակ բանը, որ նա կարդացել է, այն է, որ իբր թե Քոչարյանը ցանկացել է Արցախը փոխարինել Մեղրիով, բայց դա էլ փաստաթուղթ չէր, նամակ էր: Ինչ վերաբերում է Մինսկի խմբի առաքելությանն ու դիրքորոշմանը, ապա այն առաջարկներ էր ներկայացնում, որոնք կողմերին կբերեին կոմպրոմիսի: Կոմպրոմիսը հետեւյալն է՝ ո՛չ ինձ, ո՛չ քեզ, ես էլ եմ ինձ անբավարարված զգում, դու էլ, եւ դրանով մենք մխիթարվում ենք ու գալիս համաձայնության: Կային բանաձեւեր՝ 3+2, 5+1 եւ այլն: Ալիեւը խոսում է կոմպրոմիսային տարբերակների մասին, որոնք հնարավոր էր կյանքի կոչել բացառապես երկու կողմի համաձայնության պարագայում: Սա շատ կարեւոր պայման էր: Կար նաեւ տարբերակ, որ Արցախն Ադրբեջանին է վերադարձնում հետեւյալ շրջանները. Աղդամը, Ֆիզուլին, Զաբրայիլը, Զանգիլանը, բացի Քելբաջարից եւ Լաչինից, ինչու, որովհետեւ Լաչինը Հայաստան-Արցախ կապն էր, որը հնարավոր չէր կտրել եւ տալ Ադրբեջանին, իսկ Քելբաջարն Ադրբեջանին միայն մի բանի համար էր հարկավոր՝ Հայաստանի դեմ պատերազմ արձակելու համար: Հակառակ պարագայում ո՛չ տնտեսապես, ո՛չ ռազմապես, ո՛չ էլ որեւէ այլ բանի համար պետք չէր այդ տարածքն Ադրբեջանին: Եղել են նման առաջարկներ, իսկ Ադրբեջանը կտրականապես դեմ է եղել դրան, այդքան մի բան:

- Ալիեւը նաեւ հայտարարել է, որ Ադրբեջանը վառելիքի առումով Հայաստանի ամենահուսալի գործընկերն է՝ երաշխավորը, ի դեպ, նա հայտարարել է, որ 40 հազար տոննա բեռ տարբեր երկրներից տեղափոխվել է Հայաստան՝ Ադրբեջանի միջոցով:

- Ռուսաստանից չստացածն ինչ-որ մի ձեւով պետք է կոմպենսացնել: Ես ուզում եմ հիշեցնել, որ Գեւորգ Պապոյանը ելույթ էր ունենում՝ պնդելով, որ ադրբեջանական բենզինն էժան է, եւ Հայաստանն ավելի էժան վառելանյութեր է ունենալու, շուկայում դրանց գներն իջնելու են, բոլորիս համար լավ կլինի եւ այլն: Այդ ժամանակ բենզինի մեկ լիտրն արժեր 450 դրամ, հիմա գինը հասել է 520 դրամի: Այսինքն՝ 20 տոկոսով բենզինի գինը թանկացել է, հետեւաբար, հերթական անգամ պետք է արձանագրենք, որ Փաշինյանի վարչախումբը ստում է, ոչ մի էժանացում էլ չկա: Ինչ վերաբերում է Ալիեւի հայտարարությանը, ապա Հայաստանին նրանք չեն կարող այնքան վառելանյութ ապահովել, որքան պետք է: Ադրբեջանի հետ կապված՝ ես կվախենայի «հուսալի» բառը համադրել, քանի որ Ալիեւն ունի իր հստակ քաղաքականությունը, ստրատեգիական տեսլականը, որտեղ Հայաստանի հետ համագործակցությունը տրամպլին է՝ այն զավթելու եւ ոչնչացնելու համար: Կարող ենք ասել, որ Ալիեւը թակարդի մեջ փոքրիկ պանրի կտոր է դրել եւ անունը դրել «հուսալիություն»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Փաշինյանի պայմանավորվածությունը դեռ չի աշխատում

Հայաստանից Ռուսաստան մի շարք գյուղատնտեսական ապրանքների արտահանման սահմանափակումները շարունակում են պահպանվել, իսկ արգելքների տակ հայտնված ապրանքների ցանկն օրեցօր ընդլայնվում է: Չնայած Նիկոլ Փաշինյանը վստահեցնում է, որ հարցը շուտով կկարգավորվի, իսկ կառավարությունից նշում են, որ հարցի կարգավորման ուղղությամբ աշխատանքներ են տարվում, սակայն առայժմ գործնական արդյունքներ չեն արձանագրվել: Հիշեցնենք, որ հուլիսի 6-ին Եկատերինբուրգում ՀՀ վարչապետը հանդիպել էր ՌԴ վարչապետ Միխայիլ Միշուստինի հետ: Հանդիպումից հետո՝ հուլիսի 9-ին, կառավարության նիստից հետո լրագրողների հետ ճեպազրույցում Փաշինյանը հայտնել էր, որ ռուսական կողմի հետ քննարկել է Հայաստանի գյուղմթերքների ներմուծման սահմանափակումների հարցը: «ՌԴ կառավարության ղեկավարի հետ ունեցել ենք բաց, անկեղծ բարեկամական քննարկում, ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ»,- ասել էր նա: Բայց հրաժարվել էր մանրամասնել, թե ինչ պայմանավորվածությունների մասին է խոսքը՝ նշելով, որ դրանց մասին կխոսի այն ժամանակ, երբ դրանք կյանքի կոչվեն, եւ բոլորը տեսնեն արդյունքը: Նա նաեւ հույս էր հայտնել, որ առկա խնդիրները կլուծվեն: Սակայն Միշուստինի հետ հանդիպումից արդեն մեկ շաբաթ է անցել, իսկ իրավիճակում որեւէ փոփոխություն դեռ չկա: Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից (ՍԱՏՄ) մեր հարցմանն ի պատասխան հայտնեցին, որ հանդիպումից հետո Հայաստանից Ռուսաստան դեռեւս որեւէ բեռ չի տեղափոխվել այն ապրանքախմբերից, որոնց արտահանումը նախկինում սահմանափակվել էր:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՈՐՈՇԵԼ Է «ԺԵՐՏՎԱ ՏԱԼ» ՄԵՐՁԱՎՈՐՆԵՐԻՆ

Նիկոլ Փաշինյանը որոշել է իր ամենամտերիմ մարդկանց «ժերտվա տալ»: Առաջինն ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն էր, որ կրնկակոխ հետեւում էր Փաշինյանին ողջ քարոզարշավի շրջանում՝ նրա հետ ձեթով պեռաշկի ու ճամփեզրից առած կուկուռուզ էր ուտում, նրա հրահանգով անպատվում ու վիրավորում ընդդիմադիրներին: Երկրորդ «զոհը», ըստ ՔՊ-ական աղբյուրների, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանն է լինելու՝ Փաշինյանի ամենավստահելի մարդկանցից մեկը, նրա աջ ձեռքը, գորշ կարդինալը, որը հազար հարց էր լուծում երկրում եւ թիմում: Ըստ մամուլի, Փաշինյանը դժգոհ է մնացել ընտրությունների արդյունքներից եւ ՔՊ շտաբի պետ Արայիկ Հարությունյանին որոշել է զրկել աշխատակազմի ղեկավարի բարձր պաշտոնից ու «աքսորել» խորհրդարան: Իշխանական մեր աղբյուրներից տեղեկացանք, որ Նիկոլ Փաշինյանը նրան գործուղում է օրենդիր մարմին՝ շարքային պատգամավորի կարգավիճակում, ինչպես ժամանակին արեց Արսեն Թորոսյանի հետ՝ աշխատակազմի ղեկավարի պաշտոնից շարքային պատգամավոր դարձնելով:

Սակայն պատճառը ոչ թե ընտրությունների արդյունքներն են, այլ՝ սուտը: Ասում են՝ Փաշինյանը չի ներում, որ իրեն խաբել են, իր գլխի տակ փափուկ բարձ դրել, թե 65 տոկոսը գրպանումդ դրված է: Մեր աղբյուրներն ասում են, որ Արայիկ Հարությունյանը, որ միաժամանակ Ծանրամարտի ֆեդերացիայի նախագահն է, ոչ մի կերպ չի պատկերացնում իրեն պատգամավորի կարգավիճակում, նա այլ ախորժակ ունի՝ հավակնում է դառնալ ՀԱՕԿ նախագահ: Կառույցի ղեկավարը ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանն է, որին Փաշինյանը որոշել է «սատկացնել», «կզըցնել»:

Արայիկ Հարությունյանը դեռեւս այս տարվա ապրիլին դրսեւորեց իր հավակնությունները՝ հրապարակավ հայտարարելով, թե Գագիկ Ծառուկյանը շուտով կդառնա 70 տարեկան եւ իրավունք չունի հավակնել կոմիտեի նախագահի պաշտոնին, անգամ լուր տարածվեց, որ դատարան են դիմել: «Շատ ուղիղ եմ ուզում ասել՝ սպորտային աշխարհն այս մասին չի ուզում խոսել: Շուտով լրանում է Գագիկ Ծառուկյանի 70-ամյակը, եւ իրավունք չունի 70-ից հետո հավակնել ՀԱՕԿ նախագահի պաշտոնին: Հիմա իրենք փորձում են այսպիսի հնարքներով, ընտրական եւ քաղաքական թեժ փուլում անցկացնել այդ ընտրությունները, Գագիկ Ծառուկյանին հերթական անգամ կարգել ՀԱՕԿ նախագահ, եւ նա եւս չորս տարի ղեկավարի»,- ասել էր Հարությունյանը: Ծառուկյանն Օլիմպիական կոմիտեն ղեկավարում է 2004 թվականից: Նա 70 տարեկան կդառնա նոյեմբերին, իսկ ընտրությունը պետք է լիներ ապրիլի 11-ին: Դրանից երեք օր առաջ ֆեդերացիան դատարան է դիմել, տապալվել է ընտրության հատուկ նիստը: Հայցի ապահովման միջոց է կիրառվել՝ արգելել են ընտրություն անելը, մինչեւ դատարանի որոշումը չլինի: Ի դեպ, ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանի դեպքում էլ լուրեր կան, որ գնում է Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Շահումյանցի Ժիրոն ու նրա «կլանը» կրկին մեղադրյալի աթոռին

Քննչական կոմիտեն երեկ հաղորդագրություն էր տարածել՝ առանց անուններ նշելու, որ հավաքված ապացույցների հիման վրա սպանության փորձի, սպանության նախապատրաստության, ավազակության, բնակարանային գողությունների, հրազենի ապօրինի իրացման, հրկիզման, խոշոր չափերի թմրամիջոց պահելու, մարդու առեւանգման եւ զենքի գործադրմամբ խուլիգանության գործերով 15 անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել: Նրանցից 9-ը կալանավորվել են, իսկ մյուսների նկատմամբ կիրառվել են այլընտրանքային խափանման միջոցներ: «Հրապարակ»-ի տեղեկություններով՝ գործն առնչվում է օրենքով գող Շահումյանցի Ժիրոյին՝ Ժիրայր Բրուտյանին: Մեղադրյալի կարգավիճակ ունեն նաեւ Ալիկ Գրիշկյանը, Վահե Յրմալոյանը, Հովհաննես Հովհաննիսյանը եւ այլք: Շահումյանցի Ժիրոյի պաշտպան Հունան Բաբայանին հարցրինք մեղադրանքի մասին, ասաց՝ ինքն այդ գործով չի զբաղվում, մեր հարցին, թե իր պաշտպանյալը կալանավորվա՞ծ է, ասաց՝ ոչ:

Հիշեցնենք, որ «Հրապարակ»-ն այս տարվա մարտին գրել էր, որ առաջին ատյանի դատարանն արդարացրել էր օրենքով գող Շահումյանցի Ժիրոյին եւ քրեական հեղինակություն Կիլիկիացի Հարութիկին (Հարություն Թորոսյան): Խոսքը մեկ այլ գործի մասին է, որով Ժիրոյին մեղադրում էին քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելու եւ «զոն նայողի» գործառույթներ կատարելու մեջ: Ըստ մեղադրանքի՝ նա «Արմավիր» ՔԿՀ-ի 3-րդ մասնաշենքում պահվող անձանց «դրսից բերված գրեֆներ» էր բաժանել եւ հանձնարարել անկարգություններ անել: Գործով անցնում էր նաեւ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակից Արթուր Բրոյանը: Գործը դատարան էր ուղարկվել 2022 թվականին՝ երեք մեղադրյալով: Երեք տարվա դատաքննությունից հետո դատարանն արդարացրել էր Ժիրայր Բրուտյանին՝ նրան վերադարձնելով նաեւ իր 20 մլն դրամ գրավը:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Ներիշխանական խմորումներ եվ ՔՊ-ական կրքեր

Հունիսի 7-ի ընտրություններից հետո ներիշխանական բուռն խմորումներ են ընթանում: Նիկոլ Փաշինյանը նախ որոշել է երկու առանցքային կուսակցականների չեզոքացնել, եթե չասենք՝ երեք: Առաջինը Ալեն Սիմոնյանն էր, որի նկատմամբ անարգանքն անգամ ՔՊ-ում չեն կարողանում հասկանալ: Մինչեւ վերջին օրը բոլորը, այդ թվում՝ Ալեն Սիմոնյանը, համոզված են եղել, որ ԱԺ նախագահի պաշտոնը նրանն է, իսկ երբ վարչության նիստից ժամեր առաջ տեղեկացել են, որ Փաշինյանը որոշել է փակ քվեարկություն անցկացնել ԱԺ նախագահի 3 թեկնածուների միջեւ, հասկացել են, որ որոշել է Սիմոնյանին «քցել»:

Երկրորդ անձը Արայիկ Հարությունյանն է դառնալու, որին Փաշինյանը որոշել է գործուղել ԱԺ՝ որպես շարքային պատգամավոր: Եվ երրորդը ՔՊ հնաբնակներից Մխիթար Հայրապետյանն է, որը չի վերանշանակվի ԲՏԱ նախարարի պաշտոնում, չնայած օրեր առաջ Փաշինյանն ասել էր, որ կառավարության կազմում փոփոխություններ չեն լինելու:

Մեր աղբյուրներն ասում են, որ Փաշինյանը ճյուղ առ ճյուղ, անհատ առ անհատ որոշել է անդրադառնալ բոլորին եւ որոշել, թե ով որտեղ ու ինչ կարգավիճակ պետք է զբաղեցնի առաջիկա տարիներին: Ընդ որում, նրա չափանիշները ոչ մեկին հասկանալի չեն՝ կարող է մարդը մի առիթով մի նախադասություն ասած լինի, եւ դա լինի պատճառը, կամ՝ դրսից եկած մի հրահանգ, կամ՝ ինչ-որ մեկը մի բան շշնջացած լինի ականջին, եւ նա դրան հավատացած լինի: Մի խոսքով՝ անհասկանալի, անկանխատեսելի մարդու որոշումներ:

Տեղեկացանք, որ ուշագրավ վերադասավորումներ են ընթանում նաեւ Կոտայքի մարզում: Երեկվա համարում գրել ենք, որ ԵԿՄ նախագահ Սասուն Միքայելյանին ՔՊ առաջնորդը որոշել է խորհրդարան բերել՝ պատգամավորի կարգավիճակով, ավելին՝ թիմի ներսում խոսում են, որ Փաշինյանը խոստացել է նրան ԱԺ պաշտպանության մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը, եւ թերեւս սա է պատճառը, որ Միքայելյանն իր թեկնածությունն է առաջադրել: Այս պաշտոնի համար առաջադրվել են նաեւ հանձնաժողովի գործող փոխնախագահ Արմեն Խաչատրյանը, շրջակա միջավայրի նախկին նախարար Հակոբ Սիմիդյանն ու Վիլեն Գաբրիելյանը: Թե ինչու է որոշել Սասուն Միքայելյանին խորհրդարան բերել, պատճառները, ըստ մեր աղբյուրի, տարբեր են: Նախ, որ առաջիկայում Ալիեւի հերթական հրահանգը կատարելու շրջանակներում մտադիր է ԵԿՄ-ն լուծարել, եւ երկրորդ՝ Փաշինյանը որոշել է մարզի ղեկավարումը կրկին թողնել ծնունդով Կոտայքի մարզից մեկ այլ կարկառուն ՔՊ-ականի՝ Ռոմանոս Պետրոսյանի ազդեցության տիրույթում, ուստի որոշել է սիրաշահել Միքայելյանին պատգամավորական եւ հանձնաժողովի նախագահի մանդատով: Բացի այդ, Միքայելյանը Փաշինյանի համար, որքան էլ զարմանալի թվա, կառավարելի պատգամավոր կլինի. բանն այն է, որ անցած տարիներին Միքայելյանն ու իր գերդաստանը Կոտայքում «մանվելգրիգորյանություն» են արել, եւ ամեն ծառուտուփ նրանց տնօրինության տակ է, եւ միայն Փաշինյանի բարյացակամության շնորհիվ է, որ այդ ամենը քրեական վարույթներ չի դառնում, բայց չկա երաշխիք, որ ինչ-որ պահի չի դառնա: Մեզ պատմեցին նաեւ, որ Միքայելյանի վաղեմի երազանքն է, որ աղջկա ամուսնուն՝ փեսային դարձնի մարզպետ, որը երկար տարիներ, մինչ օրս փոխմարզպետի պաշտոնն է զբաղեցնում: Սակայն, որպեսզի մարզն ամբողջությամբ նրանց տիրապետության տակ չանցնի, փեսան չի նշանակվի, փոխարենը աներոջ սիրտը կշահեն մանդատով:

Վերադառնալով մարզի կառավարմանը՝ նշենք, որ գործող մարզպետ Ահարոն Սահակյանին եւս պատրաստվում են խորհրդարան գործուղել: Ասում են՝ Սահակյանը, որ ներկայում արձակուրդում է, ինքն է տենչում մանդատը վերցնել, քանի որ չի ձգում մարզպետի պաշտոնին: Նա չնայած համարվում էր Ռոմանոս Պետրոսյանի կադրը, սակայն Միքայելյանների դեմ դուրս չի եկել եւ հարկ եղած դեպքում էլ անցել է նրանց թրի տակով, տեղի տվել գերդաստանի ծավալապաշտական ցանկություններին:

Այժմ մարզպետի հավանական թեկնածու է դիտարկվում ՔՊ խմբակցության պատգամավոր Լիլիթ Ստեփանյանը, որը ցուցակում 66-րդն է: Ասում են՝ նա էլ է ցանկանում խորհրդարան գնալ, սակայն նրան մարզպետի պաշտոնում ուզում է տեսնել Ռոմանոս Պետրոսյանը՝ հավատալով, որ Ստեփանյանը մի անգամ եկել է Սասուն Միքայելյանի հախից, հիմա էլ կգա: Բանն այն է, որ Ստեփանյանը Սասուն Միքայելյանի ընկերոջ դուստրն է, Միքայելյանն է նրա անունը տարիներ առաջ գրել տվել «Իմ քայլի» ցուցակում, բայց ընտրություններից հետո ընկերոջ դստերը խնդրել է, որ հրաժարվի՝ չմտնի խորհրդարան, քանի որ ինքը մտնում է, եւ սիրուն չէ, որ իր բերած մարդն էլ մտնի: Լիլիթ Ստեփանյանը չի լսել Միքայելյանին, ասում են՝ նրան դուխ է տվել Ռոմանոսը, որից հետո հայրիկի ընկերոջ հետ ճանապարհները հեռացել են, եւ Ստեփանյանն ամբողջովին գործել է Ռոմանոսի կուրացիայի ներքո: Ի դեպ, Ստեփանյանն իրեն պահում է Վահագն Ալեքսանյանի, Արթուր Հովհաննիսյանի պես, եթե դրա կարիքը զգացվում է, նա պատրաստ է ամենակեղտոտ հայտարարություններն անել ընդդիմության, Վեհափառի, իշխանության այլ ախոյանների հասցեին:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Մի օլիգարխին կորցանում են, մյուսին՝ աճեցնում

Մինչ այս օրերին տնտեսվարողներն ու գյուղացիներն իրենց բերքի ու արտադրանքի ձեռքը կրակն են ընկել՝ չեն կարողանում արտահանել եւ իրացնել, եւ իշխանությունն արագ տեմպերով քաղաքական հաշվեհարդար է տեսնում գործարար Գագիկ Ծառուկյանի նկատմամբ՝ փակելով նրա գործարաններն ու հազարավոր աշխատողների զրկելով եկամտի աղբյուրից, նույն տեմպերով իշխանության սրտի օլիգարխ Նարեկ Նալբանդյանն ընդլայնում է իր բիզնեսն ու գրոհում եվրոպական շուկան: Նրա հյուրանոցային բիզնեսը, խմիչքների եւ ձվի արտադրությունը սրընթաց վերելք են ապրում: «By Nalbandyan ապրանքանիշի ջրի, օղու եւ ոչ ալկոհոլային ըմպելիքների գործարանը շարունակում է ընդլայնել իր արտադրական հզորությունները՝ միջազգային շուկաներում աճող պահանջարկը բավարարելու նպատակով: Գործարանում ներդրվել են նոր, ժամանակակից արտադրական եւ շշալցման գծեր, կատարելագործվել են արտադրական գործընթացները՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Արդյունքում By Nalbandyan ապրանքանիշի արտադրանքի առաջին խմբաքանակն արդեն արտահանվել է ԱՄՆ, իսկ արտադրության ընդլայնումը հնարավորություն կտա մեծացնել արտահանման ծավալներն ու մուտք գործել նոր շուկաներ, այդ թվում՝ եվրոպական երկրներ»,- տեղեկացրել է «Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ» ընկերությունը: Նարեկ Նալբանդյանը գրոհում է նաեւ ձվի շուկան: «Գետամեջ» թռչնաֆաբրիկան նրա նախաձեռնությամբ վերագործարկվել եւ արդիականացվել է՝ դառնալով ժամանակակից թռչնաբուծական համալիր: «Լուսակերտ» թռչնաֆաբրիկայում առաջիկայում կմեկնարկի լայնածավալ ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է փուլային տեխնիկական վերազինում, արտադրական հզորությունների ընդլայնում եւ նոր աշխատատեղերի ստեղծում: Նալբանդյանի «Գոլդեն Փելիս» (այժմ՝ Eighty Eight Hotel and Spa) Ծաղկաձորի հյուրանոցային համալիրը դարձել է ամենաշատ զբոսաշրջիկ ընդունող հյուրանոցը, իսկ օղիների արտադրությունն էլ այս սահմանափակումների ֆոնին դարձել է ամենաշատ պահանջարկ ունեցողը: Այստեղ են ասել՝ ինչ չի կարելի Գագիկ Ծառուկյանին, կարելի է Նարեկ Նալբանդյանին:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՐՏԻ 1

ԿԼԿՏԻԱՆԱՆ ԱՅՆՔԱՆ, ՈՐՔԱՆ ԹՈՒՅԼ ԿՏԱ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

Նիկոլ Փաշինյանն ու նրա իշխանությունը նույնիսկ մեռած մարդկանց հետ են կռիվ տալիս: Անգամ նախկին իշխանության մաս կազմած հանգուցյալների ուրվականն այս մարդկանց հանգիստ չի տալիս: ՀՀ գլխավոր դատախազությունից երեկ հայտնեցին, որ դատախազը Մարտի 1-ի գործով մեղադրյալներից մեկի՝ ոստիկանության նախկին պետ Հայկ Հարությունյանի վերաբերյալ քրեական վարույթը վերադարձրել է նախաքննական մարմնին՝ մեղադրական եզրակացությամբ այն ավարտելու համար: «2008 թվականի մարտի 1-2-ը Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում դատախազը սեփական նախաձեռնությամբ 2026 թվականի ապրիլի 18-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել ՀՀ ԿԱ ոստիկանության նախկին պետ Հ. Հ.-ի նկատմամբ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական լիազորություններն անցնելուն օժանդակելը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով) եւ 315-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական անփութություն, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանքներ): Քրեական վարույթով պարզվել է, որ Հ. Հ.-ն, 2003 թվականից մինչեւ 2008 թվականի մայիսի 29-ը զբաղեցնելով ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության պետի պաշտոնը, իրականացնելով ՀՀ ոստիկանության ընդհանուր ղեկավարումը, 2008 թվականի մարտի 1-ին անցնելով իր պաշտոնեական լիազորությունները, ՀՀ ոստիկանության այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ հանցակցությամբ կազմակերպել է ոստիկանության տարբեր ստորաբաժանումների կողմից բռնության եւ հատուկ միջոցների գործադրմամբ զուգորդված Երեւան քաղաքի Ազատության հրապարակում նստացույց անող խաղաղ ցույցը ցրելը, ցուցարարներին հրապարակից բռնության գործադրմամբ հարկադրաբար հեռացնելը, ապա քաղաքի կենտրոնական հատվածներում նրանց կուտակումները, հնարավոր ցույցերն ու հավաքները բացառելը, որպիսի գործողություններով անձանց իրավունքներին եւ օրինական շահերին, ինչպես նաեւ հասարակության եւ պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս: Ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցրած Հ. Հ.-ին առաջադրված մյուս մեղադրանքի հիմքում դրված է այն հանգամանքը, որ Հ. Հ.-ն՝ որպես ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավար, պարտավոր լինելով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել ոստիկանության գործունեությանն ու աշխատանքի կազմակերպմանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծեր եւ առաջարկություններ, այդ թվում՝ «Չերյոմուխա 7» արցունքաբեր եւ «Զարյա» լուսաձայնային եւ այլ հատուկ միջոցների կիրառման կարգը, չի կատարել այդ պարտականությունը: Հաշվի առնելով, որ Հ. Հ.-ն 2019 թվականին մահացել է՝ նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը հանձնվել է օրինական ներկայացուցչին՝ վերջինիս կնոջը:

Հ. Հ.-ի կինն առարկել է, որպեսզի մեղադրյալի մահվան հիմքով Հ. Հ.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը դադարեցվի: Հսկող դատախազի կողմից թիվ 62202608 քրեական վարույթից անջատված թիվ 62292726 քրեական վարույթի նյութերը վերադարձվել են վարույթ իրականացնող մարմնին՝ Հակակոռուպցիոն կոմիտեին՝ մեղադրական եզրակացությամբ նախաքննությունն ավարտելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար»,- ասվում է հաղորդագրության մեջ: Խոսքը նախկին ոստիկանապետ, իր առանձնատանը 2019 թվականի սեպտեմբերին ինքնասպան եղած Հայկ Հարությունյանի մասին է: Ի դեպ, սա առաջին դեպքը չէ, երբ հանգուցյալի հանդեպ քննությունը շարունակվում է: Նման քննություն է ընթանում նաեւ գեներալ Մանվել Գրիգորյանի, ԱԱԾ տնօրեն Գորիկ Հակոբյանի նկատմամբ: Դեպքերի մեծ մասում գործերի քննությունը շարունակելու պահանջը դնում են հանգուցյալի հարազատները, որոնք հետամուտ են, որպեսզի իրենց հարազատն արդարացվի, հետմահու նրա անունը չարատավորվի, չհիշվի որպես հանցագործ: Սակայն հարց է ծագում՝ ինչու է այս իշխանությունն այսօր կատարվող հանցագործությունները բացահայտելու, այսօրվա հանցագործներին պատժելու փոխարեն տարիներ առաջ տեղի ունեցած դեպքերով քրեական վարույթներ հարուցում, որ հանգուցյալների հարազատներն էլ այլ ճար չունենան, քան վարույթը շարունակելու պահանջ ներկայացնելը:

Նախկին դատավոր **Ալեքսեյ Սուքոյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է. «Ես նման բան չէի լսել իմ ողջ կյանքում: Սա ընդհանրապես կարճման ենթակա գործ է, մահացած մարդու նկատմամբ ինչ պետք է անեն, ես դա լավ չեմ հասկանում: Եթե խոսքն ուղղակի Մարտի մեկի քրեական գործի վերաբացման մասին լիներ, դա մի փոքր այլ կլիներ, բայց թե ինչ կարող են մահացած մարդու հետ կապված փնտրել, դա աբսուրդ է: Սա ոչ իրավաչափ է, հասկանում եք, չէ՞, ինչ աստիճան աբսուրդի հետ գործ ունենք: Եթե մարդը մահանում է, գործը նման դեպքերում չի կարող նորից բացվել: Մի բան այն չէ այստեղ: Դժվարանում եմ նույնիսկ այս ամենին գնահատական տալ: Մարտի 1-ի գործը Փաշինյանի համար մի գործընթաց է, որի շուրջ նա անդադար փորձում է ինչ-որ նոր բաներ փնտրել: Սա է ողջ խնդիրը: Ո՛չ տրամաբանություն կա, ո՛չ իրավաչափություն կա»:

Նախկին փոխոստիկանապետ, պատգամավոր **Գագիկ Համբարձումյանն** էլ, անդրադառնալով նույն թեմային, ասաց. «Հերթական աբսուրդը: Մահացած մարդու հետ կապված ինչ գործ կարող է լինել, թեպետ այսօրվա վիճակով զարմանալ պետք չէ, բեսպրեդել է ամենուր: Ինչ ասես, անում են: Կլկտիանան այնքան, որքան թույլ կտա հանրությունը: Լկտին կլկտիանա այնքան, որքան թույլ կտանք: Թույլ ենք տալիս, սա էլ լկտիանում է: Այս մարդու լկտիությունները պետք է մի օր անպայման կանխել, այս հանցագործներին պետք է զրկել իշխանությունից: Հասկանո՞ւմ եք՝ ոչ մի անելիք էլ չունեն այս մարդիկ, ոչ էլ անգամ նոր ասելիք ունեն, միայն խոսում են Մարտի 1-ի գործից, ուրիշ ոչինչ չեն կարող անել: Վերջին հաշվով, հենց Մարտի 1-ով Նիկոլը դարձավ քաղաքական գործիչ, հետեւաբար՝ իր համար շատ կարեւոր է այս գործի մասին շահարկումներ անելը»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԵԿ ՏԱՐԻ ՀՈՐՍ ԱՄԻՍ ԱՌԱՋ ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՄԱՏՆՎԱԾ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԿՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՎԻ

2018 թ. օգոստոսի 10-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Բերդ քաղաքում «Տավուշ տեքստիլ» ընկերության Բերդի ձեռնոցի գործարան էր այցելել, ձեռնարկության գործունեության մասին երկար զրուցել էր Մոսկվայում բնակվող սեփականատեր Սուրեն Երիցյանի հետ: Ծնունդով Արծվաբերդ գյուղից, Ռուսաստանում գործարարությամբ զբաղվող Սուրեն Երիցյանը, բացի Բերդ քաղաքից, ձեռնոցի գործարաններ է ստեղծել եւ գործարկել Բերդի սահմանամերձ Արծվաբերդ, Մովսես, Չորաթան, Պառավաքար գյուղերում: Սակայն ընկերության Բերդի, Արծվաբերդի գործարանները չեն գործում: Ո՞րն է եղել Բերդի ձեռնոցի գործարանի փակվելու պատճառը: Բերդ համայնքում լուրեր էին տարածվել, որ ընկերության սեփականատեր Սուրեն Երիցյանն Ուզբեկստանում ձեռնոցի գործարան է գործարկել, այդ պատճառով է փակվել Բերդի գործարանը:

«Տավուշ տեքստիլ» ընկերությունից տեղեկացա, որ Ս. Երիցյանն իսկապես գործարան ունի Ուզբեկստանում, սակայն դա կապ չունի Բերդի ձեռնոցի գործարանի պարապուրդի հետ: Ընկերությունից ստացված տեղեկություններով՝ Բերդի գործարանի փակվելու պատճառը նախկինում իրականացված ոչ արդյունավետ ղեկավարումն է եղել, գործարանի կառավարման համար պատասխանատու անձինք տարիներ շարունակ սխալ են տնօրինել ընկերության միջոցները՝ դրանք օգտագործելով անձնական եւ այլ կարիքների համար: 2025թ. մարտից Բերդ քաղաքի ձեռնոցի գործարանը հարկադիր պարապուրդի մեջ է:

2025թ. նոյեմբերից «Տավուշ տեքստիլ» ընկերության տնօրենը Հրաչ Օհանյանն է, որը Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուր գյուղի բնակիչ է: Նա մեզ հայտնեց, որ հիմա Բերդ քաղաք են առաքվում նոր հաստոցներ, մոտավորապես մեկ ամսից Բերդի ձեռնոցի գործարանը կվերաբացվի եւ աշխատանքով կապահովի 150 մարդու: Ներկայում «Տավուշ տեքստիլ» ընկերության ձեռնոցի գործարաններում աշխատում է 350 մարդ: Այդ ձեռնոցի գործարաններում առկա են աշխատանքի եւ վարձատրության նույն պայմանները:

Պառավաքարի ձեռնոցի գործարանի պատասխանատու Լեւոն Պապյանին հարցրի աշխատողների աշխատանքի ժամանակացույցի, աշխատավարձի չափերի մասին: Նա հայտնեց, որ աշխատողներն աշխատում են ամիսը 20 օր, 12- ժամյա հերթափոխով: Աշխատավարձը գործարքային է, փաթեթավորող օպերատորի միջին աշխատավարձը հերթափոխի համար կազմում է 10 հազար, մեխանիկինը՝ 12 հազար դրամ: Բանվորների ամսական աշխատավարձը մոտ 200 հազար դրամ է: Լ. Պապյանի խոսքերով՝ աշխատողները ճաշի ընդմիջում են անում հերթափոխով, ճաշելու համար կես ժամ է տրվում, նաեւ փոքր ընդմիջումներ են արվում, հերթափոխի 12 ժամից ընդհանուր մեկուկես ժամը կազմում է ընդմիջումների համար հատկացված ժամանակը:

Սահմանամերձ Պառավաքար գյուղի ձեռնոցի գործարանում աշխատում են Պառավաքարի, Բերդ քաղաքի եւ Տավուշ, Ներքին Կարմիրաղբյուր, Չինչին գյուղերի բնակիչները: Այդ գործարանում աշխատում են նաեւ Իջեւան համայնքի սահմանամերձ Վազաշեն, Այգեհովիտ, Ազատամուտ գյուղերի բնակիչներ: Միկրոավտոբուսն այդ գյուղերից աշխատողներին տեղափոխում է մինչեւ Այգեհովիտ գյուղի կենտրոնում գտնվող հացի փռան մոտ: «Տավուշ տեքստիլ» ընկերությունը հոգում է Իջեւան համայնքի բնակիչ աշխատողների տրանսպորտային ծախսերի մոտ 70 տոկոսը: Սակայն Բերդ համայնքի բնակիչ աշխատողներին Պառավաքարի գործարան տեղափոխող ավտոբուսն ամիսներ առաջ վթարի է ենթարկվել: «Տավուշ տեքստիլ» ընկերությունից հայտնեցին, որ առաջիկայում այդ ավտոբուսը կվերագործարկվի, եւ այն Բերդի բնակիչներին դեպի գործարան եւ աշխատողների բնակավայրեր կտեղափոխի անվճար, ինչպես եղել է նախկինում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՄ

ՈՉ ԹԵ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆ ՆԵՐՍ, ԱՅԼ ԴՈՒՐՍ ԵՆ ՇՊՐՏՈՒՄ

Հայաստանի համար կարեւոր է Ուկրաինայի օրինակը: Ինչպե՞ս են ուկրաինական արտադրողները գրավում ԵՄ շուկան կամ, ավելի ճիշտ՝ ինչպե՞ս են նրանց «դուրս շպրտում» (ձեւակերպումն ուկրաինական մամուլինն է) ԵՄ շուկայից: Ուկրաինական մամուլը, հղում անելով երկրի մետալուրգիական ընկերություններին, գրում է, որ ԵՄ-ն փակում է իր շուկան իրենց արտադրանքի առաջ, սահմանափակելով ավելի վաղ հատկացված քվոտաները: Ուկրաինան անցյալ տարի առանց հարկման ԵՄ է արտահանել 2,6 միլիոն տոննա պողպատ, մինչդեռ այս տարի այդ քվոտան նվազեցրել են 2,5 անգամ՝ թույլ տալով ընդամենը 1,05 միլիոն տոննայի ներմուծում: Բայց ավելի կարեւորն այս քվոտայի նվազեցման հիմնավորումն է. «Որոշումը կայացվել է ԵՄ իշխանությունների կողմից՝ որպես շուկաների դեմ պայքարի մաս, որտեղ աշխատուժն ավելի էժան է, քան միության ներսում»:

Թվում է, թե Ուկրաինայի հանդեպ վերաբերմունքը բոլորովին այլ պետք է լիներ՝ արտոնյալ: ԵՄ-ն միանգամից 90 միլիարդ է հատկացնում Ուկրաինային, իսկ պողպատի ներմուծումն արգելում է: Այդ 90 միլիարդն ուղղվելու է ոչ միայն պաշտպանական կարիքների բավարարմանը, դրանով ֆինանսավորվելու են Ուկրաինայի պետական այլ ծախսեր՝ աշխատավարձ, թոշակ, սոցիալական ծրագրեր, Ուկրաինայի բյուջեի 60-70 տոկոսը ձեւավորվում է արտաքին հատկացումների հաշվին: Ավելի տրամաբանական չէ՞ր լինի՝ թույլ տալ, որ Ուկրաինան ինքը գումար աշխատի եւ ինքն էլ ֆինանսավորի իր ծախսերը, ոչ թե անընդհատ արտաքին ներարկումներ կատարել: Բայց եվրոպացիների տրամաբանությունը ռացիոնալ է. 90 միլիարդը կամ դրանից առաջ հատկացված հարյուրավոր միլիարդները ոչ թե պարզապես օգնություն են, այլ՝ վարկ, պարտք, որն Ուկրաինան պարտավոր է վճարել, հետ վերադարձնել: Իսկ ուկրաինական արտադրողների համար սեփական շուկան բացելով՝ ԵՄ-ն վնասում է իր ներքին արտադրողներին, նրանց համար ստեղծելով մրցակցություն, որին նրանք չեն կարողանում դիմանալ: Դա նույնն է, որ ինչ-որ մեկին սննդի փող տաք, դրանով դուք կարեկցանք եք դրսեւորում նրա նկատմամբ, բայց երբ նա հավակնի ձեր աշխատանքին եւ եկամտին, կարեկցանքը միանգամից կփոխվի թշնամանքի:

ԵՄ տնտեսական վիճակը պարզ լինելու համար մի քանի տվյալ ներկայացնենք: Եվրոպական մամուլը գրում է, որ ԵՄ տնտեսապես ամենամեծ ու առաջատար երկրի՝ Գերմանիայի տնտեսական վիճակը տարեցտարի վատթարանում է: Հալեյում գտնվող Լայբնիցի անվան տնտեսական հետազոտությունների ինստիտուտի տվյալներով, 2026 թ. երկրորդ եռամսյակում Գերմանիայում լուծարվել են մոտ 5 հազար ձեռնարկություն եւ բաժնետիրական ընկերություն, ինչը ռեկորդային է վերջին 20 տարիների համար, երրորդ եռամսյակի համար կանխատեսվում է հետագա աճ:

Գերմանիայի առեւտրաարդյունաբերական պալատի գլխավոր վերլուծաբան Ֆոլկեր Թրեյերն էլ հայտարարել է, որ 2025-ին յուրաքանչյուր 20 րոպեն մեկ գերմանական որեւէ ընկերություն սնանկության հայտ է ներկայացնում: Գերմանիայի դաշնային վիճակագրական ծառայության (Destatis) տվյալներով՝ սնանկությունների թիվը մի քանի տարի շարունակ կայուն աճում է. 2024 թվականին այդ ցուցանիշը 2023-ի համեմատ աճել է 22.4%-ով, իսկ 2023-ին այս ցուցանիշը 2022-ի համեմատ աճել է 22.1%-ով: ԵՄ-ի բյուջետային պակասորդը 2026 թվականի համար կազմում է 6.2 տոկոս, այն դեպքում, երբ ի սկզբանե որոշել էին, որ այն չպետք է գերազանցի 3 տոկոսը, դա վերաբերում էր նաեւ անդամ երկրներից յուրաքանչյուրին: ԵՄ անդամ Բուլղարիայի բյուջետային պակասորդը կազմում է 22 տոկոս, Հունաստանինը՝ 18:

Այս տեղեկությունները շատ կարեւոր են՝ հասկանալու համար, որ ԵՄ-ում չեն սպասում հայ ֆերմերներին եւ արտադրողներին, այլ իրենք են շուկաներ փնտրում՝ իրենց արտադրանքն իրացնելու, իրենց տնտեսական եւ ֆինանսական խնդիրները լուծելու համար: Կարող են ասել, որ Հայաստանի արտադրական հզորություններն այդքան մեծ չեն, որ վտանգ ներկայացնեն ԵՄ-ի համար, մենք Ուկրաինա չենք, որ միլիոնավոր տոննաներով պողպատ, ցորեն ու եպիտացորեն, թռչնի միս կամ ձու արտադրենք, որ սպառնանք ԵՄ շուկաների ներքին կայունությանը: Դա ինչ-որ իմաստով ճիշտ է: Բայց մեր դեպքում էլ կա ուրիշ խնդիր: Ուկրաինական պողպատը կամ ցորենը հումք են, դրանք ունեն ստանդարտ չափանիշներ եւ վաճառվում են բորսաներում եւ բորսայական գներով: Հայկական փոքր ֆերմերային տնտեսությունները չեն կարող բորսայական ապրանքներ արտադրել, իրենց արտադրանքը հայտնի դարձնել եվրոպացի սպառողին:

Ինչո՞ւ է Ռուսաստանում հայկական ապրանքը վաճառվում՝ մեր գինիները, հանքային ջրերը, կոնյակը ռուսական շուկայում հայտնի են եղել խորհրդային տարիներից, դրանք ներկայացնելու կարիք չկա: Ռուսաստանում կոմպակտ ապրող հայկական համայնքներ կան՝ հարյուր հազարանոց համայնքներ Մոսկվայում, Դոնի Ռոստովում, Կրասնոդարում, Սոչիում, Սանկտ Պետերբուրգում: Այդ քաղաքներում եւ ավելի փոքր ռուսական քաղաքներում կան հայկական խանութներ, եւ հայկական արտադրանքի հիմնական սպառողը հայեր են, որոնց այդ արտադրանքը հայտնի է: ԵՄ-ում նման մեծ հայկական համայնքներ չկան: Ֆրանսիայում հայկական կոնյակ կամ գինի չես վաճառի, հանքային ջուր չես վաճառի, Հայաստանի հարուստ խավն է ֆրանսիական գինիները եւ հանքային ջրերը գերադասում տեղականին, Գերմանիայում կամ Նիդերլանդներում հայկական պահածոներ՝ բադրիջանի խավիար կամ բոխիի թթու չես վաճառի կամ որ վաճառես էլ, շատ չնչին քանակությամբ: Ռուսաստանի հայերն իրենց ռուս ծանոթներին սովորեցրել են հայկական արտադրանք սպառել, ընտանեկան ընդհանուր միջոցառումների, խնջույքների ժամանակ հայերը հյուրասիրել են ռուսներին հայկական պահածոներ, խմիչք եւ այլ արտադրանք եւ դրանով գովազդել են հայկական արտադրանքը, եվրոպաներում ընդհանուր ընտանեկան միջոցառումներ չկան, հայերը գերմանացիների կամ չեխերի հետ չեն գնում բնության գիրկ՝ քեֆ անելու, կամ տանը 15-20 հոգանոց համատեղ խնջույքներ չեն կազմակերպում: Հայերը Ռուսաստանում հազարավոր ռեստորաններ ու խանութներ ունեն, որտեղ վաճառում են Հայաստանից ուղարկվող ապրանքը, Եվրոպայում հայերը կամ փախստական են, կամ աշխատավոր դասակարգ: Խոսքը Հայաստանից գնացած հայերի մասին է:

Երբ վաղը հարյուրավոր հայկական ձեռնարկություններ սնանկանան, կամ տասնյակ հազարավոր հայեր գործազուկ մնան, ԵՄ-ում որեւէ մեկը դրա համար ոչ թե ցավ, այլ ափսոսանք չի զգալու: Վաղը ո՛չ Ուրսուլա ֆոն դեր Լայենն է Եվրահանձնաժողովի նախագահ լինելու, ո՛չ Մարթա Կոսը՝ ընդլայնման հարցերով հանձնակատար, այս մարդիկ ԵՄ շահերն են պաշտպանում, իսկ ԵՄ շահը թշնամի Ռուսաստանի դեմ այլ երկրների տրամադրելն է: Ոնց որ հիմա ո՞վ է հիշում Արցախի հանձնման հարցում դերակատարում ունեցած ԵՄ խորհրդի նախկին նախագահ Շառլ Միշելին եւ արտաքին հարցերով նախկին հանձնակատար Ջոզեպ Բորելին: Երբ դուք որեւէ հիմարություն եք անում, դրա հետեւանքը դուք եք կրում, ոչ թե հիմարացնողը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՎԵՐՋԸ

Կամ ես կլինեմ վարչապետ, կամ Հայաստանը վարչապետ չի ունենա... Ծանո՞թ խոսքեր են: Իսկ հիմա՝ ավելի ուշադիր... Հայաստանը թեւակոխել է մի փուլ, երբ այդ եզակին այլեւս ոչինչ չունի կորցնելու, իր պաշտոնից բացի: Պաշտոնը կորցրեց՝ ամեն ինչ գնալու է գրողի ծոցը՝ էլ ոչ մի վարչապետ, էլ ոչ մի Հայաստան: Եվ սա ոչ թե այն պատճառով, որ նա կամակոր է, իրասածի, չուգուն, այլ՝ այն, որ նրա այդ հատկությունները մեզ կանգնեցրել են մի օբյեկտիվ իրականության առաջ, որից պարզապես փրկության ելք չկա: Իրեն էլ, եթե հարցնես, չի կարող հուշել, չգիտի, չի պատկերացնում, թե ինչ կարելի է անել՝ այս իրավիճակից դուրս գալու համար:

Ժամանակին անեկդոտատիպ մի խոսույթ էր պտտվում: Ասում էին՝ երանի վերջից մի մարդ գար, հարցնեինք՝ ախպեր, մեր վերջն ինչ է լինելու: Այսօր դրա կարիքն էլ չկա: Սա է վերջը, որից անդին արդեն ազատ անկումն է, կործանումը: Մի երկրում, որտեղ բուն գործընթացը հետապնդումն է (քաղաքական, քրեական, տնտեսական, բարոյական), հնարավո՞ր է լինեն աշխատանք, զարգացում, գիտություն, մշակութային զարթոնք, ապագա: Բացառվում է: Դե, իսկ պատասխանատուն, այլեւս ոչինչ չունի անելու: Ձախողել է ամեն ինչ եւ ընկել հուսահատ ճղճղոցների մեջ: Արածը, ախր, ճիգ էլ չի, որ ասես՝ հա, մարդը ճիգ է թափում, որ փրկի երկիրը: Գագիկ Ծառուկյանի ձիերն ու առյուծներն ինչ կապ ունեին երկրի կործանման հետ... Սամվել Կարապետյանի ՀԷՑ-ն էր Հայաստանի թշնամին... Ռոբերտ Քոչարյանը որ նստի, կփրկվե՞նք... Իսկ գուցե «Արարատցեմենտ»-ի պետականացումի՞ց է կախված Հայաստանի լինել-չլինելու հարցը:

Հայաստանը դարձրել է ավելորդ գլխացավանք համաշխարհային ողջ հանրության համար: Ոչ ոք մեզ այլեւս լուրջ չի ընդունում: Այնքան սուտ ենք խոսել, այնքան ցատկել մի աթոռից մյուսին, այնքան գլխարկներ փոխել, որ չեն հավատում մեզ ու մեր «վարած» արտաքին քաղաքականությանը: Նույն բանը ներսում է կատարվում: 0 տոկոս վստահություն իշխանությունների հանդեպ: Ստախոս են, «քցող», անգրագետ, տուպոյ... Երկու էշի գարի տաս՝ չեն կարողանա իրարից ջոկել: Թալանչի, լափող, փոշիացնող, փչացնող: Պետական մտածողության իսպառ բացակայություն է: Էլ ե՞րբ կընկնի ձեռքները... Պիտի ուտեն, քանդեն, ոչնչացնեն, վերացնեն... Ասել են, չէ՞, կամ մենք կլինենք իշխանություն, կամ Հայաստանը իշխանություն չի ունենա:

Լավագույնը, որ կարող են անել Հայաստանի համար, կործանման այս ծամոնը ձգելն է: Տավուշում ինչ տվել՝ տվել են, հիմա կիջնեն Վայք, Տիգրանաշենը կտան, նոր բարձունքներ ու տարածքներ: Մի օր էլ կարթնանանք՝ ու Սյունիքը չկա, հայ-պարսկական սահմանը չկա, Երեւանում էլ 300 հազար ադրբեջանցի նստած՝ սպասում են իրենց տեղակայման հարցի կարգավորմանը: Քանի դեռ ձգվում է այս ամենը, լավ է, մտածում ես՝ մի լույս կբացվի, բայց ձգել-ձգձգելն էլ իրենցից կախված չէ: Միջազգային իրավիճակ է՝ հենց ներեց, թուրքերը 1-2 օրում կլուծեն այս հարցերը, ու մենք չենք էլ հասկանա, թե ինչ տեղի ունեցավ:

Մեկ ուրիշը գուցե կանգ կառներ, կխոստովաներ, որ այլեւս չի կարողանում կառավարել երկիրը, որ սա վերջն է, տալիս ենք ամեն ինչ: Բայց նա... Չէ, ինչ եք ասում, ինչ կանգնել, ինչ խոստովանել... Մեղա գալու մասին էլ խոսք չկա: 2018 թվից ոնց քշում է իր էշը, այսօր էլ շարունակում է նույն ձեւով քշել՝ ո՛չ լուծում է առաջարկում, ո՛չ փրկության ճանապարհ: Մարդկանց էլ ձեռ է առնում՝ սիրում եմ բոլորիդ: Ստում է: Ձեռքին ճար լինի, 2 օրում վարի կտա ամեն ինչ, որ փախչի, ազատվի պատասխանատվությունից: Վերեւում ասացի արդեն՝ օբյեկտիվ իրավիճակը թույլ չի տալիս, մի բան, որի վրա ինքն ազդեցություն չունի: Դեռ որքա՞ն կպահպանվի այդ իրավիճակը, հնարավո՞ր է, որ ինչ-որ բան փոխվի, եւ կասեցվի Հայաստանի «դեմոնստաժը»՝ չգիտեմ: Եվ ոչ ոք չգիտի: Նիկոլը շարունակում է խարխափել, մենք էլ՝ նրա հետ:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՄԱՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ

Հորմուզի նեղուցի մերձակայքում իրականացված օդային հարվածներից հետո Միացյալ Նահանգները սկսեց հարվածներ հասցնել նաեւ Իրանին:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Իրանը պատասխանեց տարածաշրջանում ԱՄՆ դաշնակիցներին: Մենք Իրանի հարցերով փորձագետ, քաղաքական վերլուծաբան **Արամ Շահնազարյանի** հետ փորձեցինք հասկանալ, թե ինչ է տեղի ունենում Իրանի շուրջ:

- Թվում էր, թե ԱՄՆ-ն ու Իրանը վերջապես բանակցում են, սակայն փոխըմբռնման հուշագրից հետո նորից ԱՄՆ-ն հարվածեց Իրանին, սա դառնում է երկարատեւ ու հյուծող պատերազմ:

- Առիթ ունեցել եմ ասելու, որ սա չավարտված պատերազմ է, որն իր տրամաբանական ավարտին չի հասել, եւ հրադադարը, որ հաստատվել է, չափազանց փխրուն է, եւ բանակցություններում հաջողության հասնելու հավանականությունն էլ հարաբերական է: Կա շատ կարեւոր հանգամանք՝ Իրանը թելադրող դիրքում է. այն պայմանները, որոնցով կողմերը համաձայնել էին նստել բանակցությունների սեղանի շուրջ, միանշանակորեն Իրանին ձեռնտու էին, եւ սա ենթադրել է տալիս, որ Միացյալ Նահանգներն ու Թրամփի վարչակազմը դժվար թե կարողանան համաձայնել դրանց հետ ու այդ պայմաններով նստել բանակցությունների շուրջ: Իսրայելի գործոնը, իհարկե, դերակատար է, բայց ես կասեի՝ այս փուլում ոչ այդքան ուղղակի, որովհետեւ ներկա դրությամբ այս պայմանները ձեռնտու չեն ԱՄՆ-ին, եւ իրենք փորձելու են դա փոխել: 3 կարեւոր բան է խախտել ԱՄՆ-ն, առաջինն այն էր, որ մինչ բանակցությունների վերջնական ավարտը, համաձայնագրի ստորագրումը եւ Հորմուզի նեղուցի կարգավիճակի հստակեցումը, նեղուցից նավարկությունը տեղի է ունենալու Իրանի վերահսկողության ներքո:

- Բայց ԱՄՆ-ն այլ բան է հայտարարում:

- ԱՄՆ-ն այլ բան հայտարարեց, փորձեց սա խախտել եւ փորձեց Օմանի տարածքով այլ միջանցք ստեղծել, որպեսզի իր վերահսկողության ներքո տեղի ունենար, այսպես կոչված, անցումը: Դա շատ կարեւոր հանգամանք էր, որը խախտվեց, եւ Իրանը արձագանքեց: Ու հիմա, ինչքան էլ Թրամփն իրեն կոտորի ու հայտարարի, որ բաց է նեղուցը, իրականում բոլորը խոսում են այն մասին, որ նեղուցը փակ է, որեւէ երթեւեկություն տեղի չի ունենում: Երկրորդը կապված էր Իրանի ակտիվների հետ, որ որոշակի մասը պիտի ապասառեցվեր, եւ սա եւս խախտվեց՝ Միացյալ Նահանգները սկսեց պայմաններ թելադրել, այս դեպքում պայմանավորվածությունների խախտում էր դա: Եվ երրորդը վերաբերում էր Իրանի նավթի վաճառքի դեմ սահմանված պատժամիջոցների չեղարկմանը՝ բանակցությունների ընթացքում, ինչը նույնպես խախտվել է: Այս հիմնական դրույթները խախտվել են, ԱՄՆ-ն հարվածում է Իրանին, եւ Իրանն էլ պատասխան հարվածներ է հասցնում: Հիմա մենք կարող ենք ասել, որ կողմերի միջեւ որեւէ բանակցություն տեղի չի ունենում, այդ բանակցային խմբերը, որ պիտի ձեւավորվեին ու աշխատեին, այդ մասին որեւէ տվյալ չկա:

- Իսրայելական կողմի շահագրգռությունը, իհարկե, հասկանալի է, նույնիսկ մամուլում լուր հրապարակվեց, որ իսրայելցիները մահափորձ են ուզում իրականացնել Աբբաս Արաղչիի ու Ղալիբաֆի դեմ: ԱՄՆ-ի կողմից պայմանների խախտման հարցում իսրայելական կողմի մեղքն է, թե՞ ԱՄՆ-ն սեփական դեմքը փրկելու, ընտրություններից առաջ դիվիդենտներ շահելու համար է անում:

- Եվ-եւ, որովհետեւ այդ փուլում ակնհայտ էր, որ Իսրայելը փորձելու է ցանկացած գնով տապալել, եւ մանավանդ հստակ է այն տեղեկությունը, որ թիրախավորելու է բանակցային երկու գլխավոր դեմքերին՝ Ղալիբաֆին եւ Արաղչիին: Միացյալ Նահանգները փորձեց դա չեզոքացնել՝ թե՞ իր դեմքը փրկելու, թե՞ սաղմնային վիճակում գտնվող գործընթացը չվիժեցնելու համար, սա հստակ էր: Բայց ես նշեմ, որ հիմա շատ բան է փոխվել առաջին օրերի համեմատությամբ: Չեմ կարծում, որ ԱՄՆ-ն կփորձի գնալ նման արկածախնդրության, այսինքն՝ շարքից հանել բանակցային գործընթացի կարեւորագույն դեմքերին, մանավանդ նրանց, ովքեր պատասխանատվություն են կրում բանակցային գործընթացի համար: Չեմ էլ կարծում, որ Իսրայելը ներկա դրությամբ կփորձի գնալ նման արկածախնդրության, քանի որ այդ դեպքում պատերազմի հետեւանքներն Իսրայելի համար սարսափելի են լինելու՝ Իրանի պատասխանը: Հատկապես որ իսրայելական փորձագիտական շրջանակները խոսում են այն մասին, որ պատերազմից հետո Իսրայելի ոչ պաշտպանական, ոչ հարձակողական արսենալը վերականգնված չէ՝ ներքաշվելու համար մեկ այլ լայնածավալ պատերազմի մեջ:

- Պատերազմը բավականին ծանր ու հյուծիչ էր նաեւ Իրանի համար, ու չնայած Իրանի հասարակությունը միավորվեց, բայց խնդիրները դեռեւս կան, որքա՞ն կդիմանա Իրանը:

- Պատերազմն իր հետեւանքներն է ունեցել Իրանի համար՝ թե՞ ենթակառուցվածքային, թե՞ տնտեսական, թե՞ մարդկային ռեսուրսի առումով: Սա ակնհայտ է, ոչ ոք չի կարող հակառակը պնդել: Իրանը տնտեսական լուրջ խնդիրներ ունի, եւ պատերազմն ու դրան հետեւած ճնշումներն ավելի են սաստկացրել այդ տնտեսական խնդիրները, բայց երկրի դիմադրողականությունը պահպանվում է: Դրա վառ ապացույցն անցյալ շաբաթ հանգուցյալ հոգեւոր առաջնորդի հուղարկավորության եւ թաղման արարողությունն էր, որը վերածվեց աննախադեպ, այսպես կոչված, քաղաքական ուժի ցուցադրության միջազգային ասպարեզում: Հատկապես որ արեւմտյան կողմն էլ է խոստովանում միլիոնավոր մասնակցության մասին, իրանական շրջանակները, հենվելով իրենց ունեցած տվյալների վրա, նշում են 40-43 միլիոն մարդու մասնակցության մասին: Եվ շատ մեծ էր թիվը նրանց, ովքեր ցանկանում էին, սակայն չկարողացան մասնակցել: Նաեւ հուղարկավորության արարողությունը, որը տեղի ունեցավ Իրաքում՝ Մեջեւ եւ Ջերբելլա քաղաքներում: Դա եւս ուժի յուրահատուկ ցուցադրում էր, Իրանի տարածաշրջանային դերակատարման, տարածաշրջանային ազդեցության ցուցիչ: Պատմության մեջ եզակի դեպքերից էր երեւի՝ երկրի առաջնորդի համար նման մասշտաբներով հուղարկավորություն են կազմակերպում այլ երկրում:

- Իսկ որքա՞ն կարող է դիմանալ Իրանը:

- Քաղաքական առումով Իրանը պատրաստ է, ինչ վերաբերում է ռազմական առումով, բոլորը գիտեն, որ թեեւ Թրամփը թե՞ 12-օրյա պատերազմի, թե՞ դրանից հետո, թե՞ 40-օրյա պատերազմի, թե՞ այս ընթացքում բազմիցս հայտարարել է, որ ոչնչացրել է Իրանի օդուժը, ոչնչացրել է Իրանի ծովուժը, հրթիռային եւ ԱԹՍ հնարավորությունները, բայց փաստը մնում է փաստ, որ Իրանը դրանք պահպանում է, Իրանը շատ արագ վերականգնում է իր ռազմական ներուժն այդ առումով, եւ այն պատասխան հարվածները, որ հասցնում է, դրա պարզ ապացույցն է: Ռազմական առումով թեեւ կորուստները մեծ են եղել, բայց բոլոր տվյալները փաստում են այն, որ Իրանը կարողանում է շատ արագ վերականգնել այդ ամենը եւ պատասխան հարվածներ տալ: Իսկ ենթակառուցվածքների առումով, այո, մեծ են կորուստները, այստեղ եւս փորձ է արվում վերականգնվելու: Այն, թե արդյոք Իրանը կկարողանա վերականգնվել, տեսականորեն, այո, բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ Իրանը հնարավորություն ունի մտնելու հերթական ասիմետրիկ ձեւաչափով պատերազմի մեջ:

- Իսկ ինչպիսի՞ն են լինելու այդ պատերազմի ծավալները:

- Այդ պատերազմի ծավալները շատ ավելի մեծ են լինելու, քան անցած 40-օրյա պատերազմի ծավալները:

- Այսինքն, Իրանը ժամանակն իզուր չի կորցրել:

- Չի կորցրել, 12-օրյա պատերազմը, որն անցած տարի ամռանը տեղի ունեցավ, շատ կարեւոր փորձադաշտ էր Իրանի համար: Իրանը կարողացավ գտնել թե՞ իր թույլ կողմերը, թե՞ բացերը, թե՞ ուժեղ կողմերը, թե՞ այն ռազմավարությունն ու մարտավարությունը, որ պիտի կիրառի: Բայց պիտի նշեմ, որ Իրանը բացարձակապես ցանկություն չունի պատերազմի մեջ ներքաշվելու: Որպես պետություն, ամեն ինչ անելու է մինչեւ վերջին պահը՝ խուսափելու պատերազմից, բայց եթե, այսպես կոչված, ձեռնոցը նետվեց, կպատերազմեն, իհարկե: Մի շատ կարեւոր նրբություն էլ կա. հանգուցյալ հոգեւոր առաջնորդի հուղարկավորության ժամանակ, թաղման արարողության ժամանակ միլիոնանոց մասնակիցների պահանջը մի բան էր՝ չընկրկել թշնամու առջեւ, չհրաժարվել այն բոլոր կարմիր գծերից, որոնք ժամանակին նշել էր հանգուցյալ առաջնորդը, պահպանել այդ բոլոր կարմիր գծերը եւ մանավանդ լուծել հանգուցյալ առաջնորդի եւ մնացյալ բոլոր նահատակների վրեժը: Սրանք կարեւոր մեսիջներ էին՝ հասարակության կողմից հղված, որոնց հետ պետք է հաշվի նստել: Եվ այդ պահանջը որոշակիորեն հանրության կողմից կա, անմիջապես հուղարկավորության արարողությունից հետո նոր գերագույն գլխավոր առաջնորդը հանդես եկավ երախտագիտության ուղերձով՝ ուղղված ժողովրդին, մասնակիցներին, որտեղ նշեց, որ ամեն գնով ժամանակի ընթացքում հարմար առիթին լուծելու են ոչ միայն առաջնորդի, այլեւ բոլոր նահատակների արյան վրեժը: Սա նաեւ շատ կարեւոր քաղաքական մեսիջ էր: Սա ուղղված էր բոլորին, ու որ իրենք չեն պատրաստվում հրաժարվել իրենց կարմիր գծերից, սկզբունքներից ու այն ամեն ինչից, ինչը բխում է իրենց ազգային անվտանգության շահերից: Թե այդ վրեժը երբ ու ոնց կլինի, ոչ ոք չի կարող ասել:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՄ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆ Է

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եվրասիական եւ Արաբական հետազոտությունների ռուսական կենտրոնի ղեկավար, քաղաքագետ Դմիտրի Բրիջեն կարծում է, որ Ռուսաստանի եւ Եվրամիության միջեւ հարաբերությունները ներկայում աննախադեպ լարված են: Փորձագետն արձանագրել է, որ Բրյուսելի համար Մոսկվան ներկայում դիտարկվում է որպես ռազմավարական հակառակորդ՝ հաշվի առնելով ուկրաինական ճգնաժամի հետեւանքները եւ աճող հակասությունները եվրոպական անվտանգային ճարտարապետության եւ Հարավային Կովկասում եվրոպական ակտիվացման հետ կապված: Բրիջեն նշում է, որ Ռուսաստանն էլ իր հերթին եվրոպական երկրներին հստակ ազդակներ է ուղարկում, որ պատրաստ է սրացման տարբեր սցենարների, հատկապես այն երկրների հետ կապված, որոնք վերջերս են նեռառվել ՆԱՏՕ-ի կազմի մեջ եւ դիտարկվում են որպես ՌԴ-ի ազգային անվտանգության սպառնալիք: Քաղաքագետն ասում է, որ ռուս-եվրոպական մրցակցությունն այլեւս չի սահմանափակվում Ուկրաինայով, տարածվում է նաեւ Հարավային Կովկասի վրա, որտեղ ԵՄ-ն ձգտում է ուժեղացնել իր ազդեցությունը: Դա հատկապես զգացվում է Հայաստանին ցուցաբերվող օգնության մեջ, որտեղ Նիկոլ Փաշինյանի կառավարության հետ աշխատում է անմիջականորեն ռուսական սահմանների հարեւանությամբ: Հաշվի առնելով Անկարայում ՆԱՏՕ-ի վերջին գագաթնաժողովը՝ Բրիջեն նշում է, որ Ռուսաստանի եւ ԵՄ-ի միջեւ մրցակցությունը, ամենայն հավանականությամբ, կշարունակվի դեռ երկար ժամանակ, նույնիսկ՝ եթե Մոսկվայի եւ Սպիտակ տան միջեւ համաձայնություններ ձեռք բերվեն ուկրաինական ճգնաժամի հետ կապված: Ռուս-եվրոպական հարաբերություններում փոփոխությունը բարդ է լինելու, քանի որ չափից դուրս շատ տարաձայնություններ կան, եւ, բացի այդ, տարամետ են ընկալումները տնտեսական եւ անվտանգային ոլորտներում: Մոսկվան, ըստ նրա, հաշվի է առնում, որ ԵՄ-ն աստիճանաբար վերափոխվում է ռազմաքաղաքական միավորման, եւ դա իր հերթին բերելու է Մոսկվա-Բրյուսել մրցակցության սրացման:

«Նրա աղախնի պատմությունը». ռուսական նոր պատմական սերիալ

Արդեն քանի տարի է, ինչ ռուսական կինոարվեստում յուրօրինակ ռենեսանս են ապրում պատմական մոտիվներով կինոնկարներն ու սերիալները: Նախօրեին ռուսական պետական կենտրոնական հեռուստատեսությամբ եւ սթրիմինգային հարթակներում տեղի ունեցավ «Նրա աղախնի պատմությունը» նոր պատմական սերիալի պրեմիերան: Մասնագետներն արդեն իսկ հասցրել են նախագիծն անվանել «ռուսական «Բրիջերթոններ»»:

Պատմական մոտիվներով ծավալուն այս նախագիծը հանդիսատեսին տեղափոխում է 19-րդ դարի Մոսկվա: Թղթախաղում մեծ գումար տանուլ տալուց հետո, Ավերինների ընտանիքի հայրը հայտնվում է սնանկացման եզրին: Ընտանիքի պատիվն ու բարեկեցությունը պահպանելու միակ տարբերակը տարօրինակ մի գործարք էր: Ավերինների Աննա անունով դուստրը համաձայնում է մեկ ամիս ծառայության մտնել երիտասարդ կոմս Նիկոլայ Շերեմետեւի մոտ՝ որպես աղախին: Այն, ինչ սկսվում է որպես հարկադիր զոհաբերություն, աստիճանաբար վերածվում է բարդ սիրո պատմության, նախապաշարմունքների բախման եւ պայքարի, ինտրիգների եւ սեփական արժանապատվության ցավոտ որոնումների: Սա սերիալի ռոմանտիկ գիծն է: Սակայն իրականում նախագիծը բազմաշերտ ընտանեկան պատմություն է, որտեղ մի քանի արիստոկրատ ընտանիքների ճակատագրեր են միահյուսված, եւ որտեղ կան եւ քաղաքական ինտրիգներ, եւ ֆինանսական աղետներ, ե՛ւ բարձրաշխարհիկ սկանդալներ: Սերիալը բաղկացած է 90 սերիայից: Այն եզակի է՝ ռուսական իրականության համար քիչ պատահող մեծ ծավալայնությամբ: Նկարահանումները միանգամից մի քանի նկարահանող խմբեր են իրականացրել՝ համաժամանակյա: Կիրառվել են տեխնոլոգիական վերջին նորարարությունները, արհեստական բանականության հնարավորությունները՝ վիզուալ էֆեկտների, ծավալուն դեկորացիաների ստեղծման եւ մեծ քանակով պատմական կոստյումների համար:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՕԼԻՄՊԻԱ

ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ՄԻ 5 ՐՈՊԵ ԺԱՄԱՆԱԿ ԵՆ ՏՎԵԼ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԵՐԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ, ՀԵՌԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հուլիսի 6-ին երկիրը ցնցվեց այն արշավից, որն իրականացրին երկրի բոլոր իրավապահ կառույցները՝ միաժամանակ եւ բոլոր ճակատներով հարձակվելով Գագիկ Ծառուկյանին պատկանող ընկերությունների, դրանց տնօրենների, Ծառուկյանի զինակիցների եւ հենց իր՝ Գագիկ Ծառուկյանի վրա: Նման հարձակում անգամ թշնամու դեմ չի իրականացվել ՀՀ իրավապահների կողմից:

Պարզվեց՝ դիմակավորված ու մինչեւ ատամները զինված հարյուրավոր անձինք ոչ թե երկիրն ու հանրությանը պաշտպանելու համար են, այլ Նիկոլ Փաշինյանի քաղաքական հակառակորդներին տապալելու, ոչնչացնելու, սնանկացնելու եւ կալանավորելու համար, ինչպեսեւ ինքը խոստացել էր նախընտրական քարոզչության շրջանում: Անգամ անզեն կենդանիներին ու ոչ մի հանցանք չգործած աշխատողներին, հանգստացող զբոսաշրջիկներին, մարզվող սպորտսմեններին, հաշմանդամ երեխաներին չխնայեցին՝ բոլորին պատերին տվեցին, զրկեցին մարզվելու, հանգստանալու, աշխատելու հնարավորությունից:

Իսկ Օլիմպավանում իրավապահները երկու անգամ քննչական գործողություններ կատարեցին՝ մեկ շաբաթ անց կրկին ժամանելով: Այս մասին «Հրապարակին» հայտնեց Օլիմպավանի տնօրեն **Իշխան Սեդրակյանը**: Նշենք, որ առաջին անգամ Օլիմպավանում խուզարկություն իրականացվել էր հուլիսի 6-ին՝ նույն օրը, երբ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության եւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանի տանը եւ նրան պատկանող ձեռնարկություններում քննչական գործողություններ էին կատարվել:

Խուզարկության օրը Օլիմպավանում 4 երկրի տարբեր մարզաձեւերի շուրջ 60 մարզիկ կար, որոնց իրավապահները հեռացրել էին շենքից: «Այս պահին Օլիմպավանը փակ է, կրկին ստուգումներ են իրականացվել: Գործողությունները տեղի են ունեցել երեկ, արդեն ավարտվել են: Մենք տրամադրել ենք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, համակարգիչների վինչեստերները: Հուսանք, որ մեր հիմնարկի բացումը կարագացվի»:

Սեդրակյանը մեզ հետ զրույցում ասաց, որ առաջին խուզարկության օրը՝ հուլիսի 6-ին, Օլիմպավանում ուսումնամարզական հավաքների նպատակով 4 երկրի (ԱՄՆ, Կատար, Ռուսաստան եւ Ղազախստան) տարբեր մարզաձեւերի շուրջ 60 մարզիկ է եղել, որոնց իրավապահներն ընդամենը րոպեներ են տվել՝ անձնական իրերը հավաքելու եւ կենտրոնի տարածքը լքելու համար: «Մարզիկները զարմացած էին, որովհետեւ որեւէ քաղաքակիրթ երկրում երեւի նման բան չէիր տեսնի: Իրենց համար աբսուրդ էր այդ վիճակը, մարզիկին մի 5 րոպե ժամանակ են տալիս՝ շորերը, անձնական իրերը հավաքելու համար, ու օտար երկրից եկած մարզիկն անորոշ վիճակում է հայտնվում: Ինչ մեղավորություն ունի այս ամբողջ պատմության մեջ մարզիկը»- ասաց նա: Հարցին՝ այլ վայրեր կան, բայց Օլիմպավանի հետ համադրելի չեն, պատահական չէ, որ հենց սա է կառուցվել որպես օլիմպիական մարզաբազա:

«Ուսումնամարզական հավաքներն ամեն մեկն իր տեղանքն ունի, անհրաժեշտ ճնշում եւ այլն: Նման վայր ոչ միայն Հայաստանում, այլեւ ԱՊՀ տարածքում էլ շատ քիչ կա»,- ասաց տնօրենը:

Նա նշեց՝ կենտրոնն ունի 180 սենյակ, եւ այդքան մարզիկ կարող

այժմ որտե՞ղ են սպորտսմենները մարզվում, մեր զրուցակիցը նշեց. «Դեռեւս փակ է տարածքը: Մարզիկները դրսում են մարզվում՝ Հրազդանի ձորում կա «Բիձեքի գյոլ» կոչված վայր, հավաքականը չի կարող առանց պարապմունքների մնալ: Այսօր կոնկրետ մի խումբ է եղել՝ 40 հոգի, տեսնենք, թե վաղը ինչ կլինի»: Սեդրակյանի խոսքով՝ Հայաստանում թեպետ ուսումնամարզական հավաքներ անցկացնելու համար է միաժամանակ 5-6 մարզաձեւի մարզումներ անցկացնել: Բացի այդ, բազմաթիվ պրոֆեսիոնալ եւ սիրողական մարզվողներ կան, որոնք ունեն աբոնեմենտներ, նրանք եւս անորոշ վիճակում են հայտնվել: Սեդրակյանի խոսքով՝ միջնորդություն են ներկայացրել ՀՀ քննչական կոմիտե՝ խնդրելով թույլ տալ գոնե մասնակի վերականգնել կենտրոնի աշխատանքը կամ առնվազն թույլ տալ տեխնիկական սպասարկում իրականացնել:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԱՄԵՆ ԴԵՊՔՈՒՄ ՉԷՐ ԿԱՐԵԼԻ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՀԵՏ ՆՄԱՆ ԿԵՐՊ ՎԱՐՎԵԼ

Ծաղկաձորի «Մուլտի Ռեստ Հաուս» հանգստյան տան աշխատակիցները երեկ բողոքի ակցիա էին անում՝ իրավապահ մարմինների կողմից հյուրանոցային համալիրի գործունեության կասեցման եւ շենքը կապարակնքելու հետ կապված:

Աշխատակիցները պահանջում էին վերաբացել իրենց աշխատավայրը՝ հիմնավորելով, որ փակումն անմիջականորեն սպառնում է իրենց ֆինանսական եկամուտներին, իրենց զրկում է եկամտի աղբյուրից, վնասում է հանգստյան տան գործունեությանը: Ի դեպ, Ծառուկյանի բոլոր ընկերություններն են այս օրերին փակվել՝ սկսած «Փարավոն» ռեստորանային համալրից, «Մուլտի Վելնես» մարզասրահից մինչեւ Օլիմպավան, որտեղ սպորտսմեններ էին մարզվում:

Հանգստյան տան աշխատակիցներից մեկը «Հրապարակի» հետ կապ հաստատելով պատմել էր, որ զբոսաշրջիկներին պարզապես վռնդել են իրավապահները հանգստյան գոտուց եւ անգամ լողավազանում լողացող մարդկանց հնարավորություն չեն տվել հանգիստ հագնվել՝ կիսամերկ մարդկանց ասել են, որ պետք է լքեն տարածքը: Իսկ այդ մարդիկ բավականին մեծ գումարներ են վճարել, որպեսզի ամռան այս շոգ օրերին իրենց հանգիստն անցկացնեն Ծաղկաձորում, նրանց մեջ նաեւ օտարերկրացի զբոսաշրջիկներ են եղել: «Ժողովրդավար» Հայաստանում, պարզվում է, ոչ միայն ընդդիմադիր գործիչները եւ քաղաքական այլախոհները չունեն իրավունքներ, այլեւ Գագիկ Ծառուկյանին պատկանող հյուրանոցում հանգստացող զբոսաշրջիկները, մարզվող սպորտսմենները կամ մարզասրահից օգտվող հաճախորդները:

Տուրիզմի հայկական ֆեդերացիայի նախագահ **Մեխակ Ապրեսյանին** «Հրապարակը» հարցրեց՝ ինչ նախադեպ է սա, երբ տուրիստին անգամ շոր հագնելու հնարավորություն չեն տալիս եւ կիսամերկ վիճակում վռնդում են հանգստյան գոտուց՝ «հույժ կարեւոր օպերացիա» իրականացնելու համար: Ապրեսյանը, անդրադառնալով հարցին, մեզ հետ զրույցում ասաց. «Իհարկե, ես դեպքին ականատես չեմ եղել, սակայն եթե ամեն ինչ եղել է այնպես, ինչպես ասվում է, ապա խախտվել են զբոսաշրջիկների իրավունքները: Նույնկերպ կարող էին խախտվել, օրինակ, ինչ-որ անվտանգության

հետ կապված գործողությունների ժամանակ, ենթադրենք՝ եղել է գազի արտահոսք, պետք է զբոսաշրջիկներն արագ լքեն տարածքը:

Այնուամենայնիվ, նման աշխատանքները պետք է արվեն բալանսավորված, որպեսզի ոչ մի զբոսաշրջիկ չտուժի: Պետք է բոլոր կարեւոր նորմերը պահպանվեին, ես չեմ ասում, թե իրավապահները չկատարեին իրենց աշխատանքը, բայց չէր էլ կարելի զբոսաշրջիկների հետ նման կերպ վարվել: Մարդիկ գումարներ են վճարել, իրենց հանգիստն են վայելում, ինչ կարելի է մարդկանց ասել՝ հեռացեք ու էլ մի վերադարձեք»:

Առակներն ապրում են դարերով: Խոսում են ոչ միայն անցյալի, այլեւ ներկայի մասին: Խնկո Ապոր արջը երկու անգամ գյուղացու հետ վարուցանք էր արել: Շաղգամ, ապա ցորեն էին ցանել: Գյուղացուն մնացել էր արմատը, ապրոը՝ փտերն ու ցողունը: Գյուղա-

ԱՐՋ ԱՊԵՐԸ, ԽՆԿՈ ԱՊԵՐՆ ՈՒ ԵՐՐՈՐԴ ՎԱՐՈՒՑԱՆՔԸ

ցուն՝ հասկը, արջին՝ հողի կոշտուկը: Այդ օրվանից արջ ապերը չմոռացավ գյուղացու կեղծ ժպիտը, իր դատարկ թաթերն ու կախ մռութը:

Տարիներ անցան: Արջ ապերը, անտառի եզրին նստած, նայում էր դաշտերին ու մտածում՝ գուցե աշխարհը փոխվել է: Մի մեծ ցուցանակ էր աչք ծակում՝«Ապագա կա»: Ծանոթ դաշտում էլի եռուզեռ էր: Գյուղացին էր եկել: Նա առաջարկում էր վարուցանք անել: Արջը մտմտաց՝ երկու անգամ արդեն խաբել եք ինձ:

Գյուղացին համոզեց. «Այս անգամ ավելի կարեւորն ենք ցանելու»: Արջը մտածեց՝ երեւի ես եմ հետամնաց ու անհավատ. ամբողջ անտառը հավատում է, զարգանում է, միայն իմ դատարկ մառանն է ընդդիմադիր ու թերահավատ: Ահա ինչու հարցրեց՝ իսկ ի՞նչ ենք ցանելու: Ասաց՝ պատասխանը ոչ թե լեզվի տակ է, այլ՝ դաշտում: Խոստացավ ՝բերքի բաշխումն արդար կլինի: Լսեց: Արդեն ջահել չէր, առաջվանը չէ, բայց արջ էր:

- Տարօրինակ է,- ասաց,- առաջ ասում էիք՝ ցուրտ է, փայտ չկա, հիմա հանկարծ կրակը թեժացավ:

Գյուղացին ուսերը թոթվեց.

- Ապեր, ժամանակներն են փոխվել:

Արջ ապերը տեսավ, որ ամբողջ դաշտը եռում է: Մեկը բաժանում էր, մեկը՝ հաշվում, մեկը՝ պատմում, թե որքան լավ բերք է լինելու, մյուսը բերքի համն ու հոտն էր նկարագրում, զարմանում, որ արջն այդ տարրական բաները չի հասկանում: Միայն մի բան էր պակասում՝ բերքը: Նա վերստին հիշեց նախկին վարուցանքերը: Զգաց, որ կորցնելու վտանգի տակ է մի ուրիշ արժեք: Երրորդ անգամ մտել էր նույն խոպան դաշտը: Ոչ թե չէր հիշում անցյալը, այլ հիշում էր եւ շատ ուզում էր, որ այս անգամ անցյալը չկրկնվի: Եվ ընտրության օրը արջ ապերը գնաց այն մարդու ետեւից, ով խոստացավ բերքն արդար բաժանել:

Պաշտոնական հաղորդագրություններում ամեն ինչ հաջող էր՝ թվերը՝ գեղազարդար, ծրագիրը՝ կատարված, ապագան՝ լուսավոր: Արջ ապերը նկատեց, որ բերքը դեռ չէր աճել, բայց դրա հաջողության մասին արդեն երեք ժողով, երկու շնորհանդես ու չորս հարցազրույց էր եղել: Դաշտում այդ տարի նորից շատ բան աճեց՝ խոսքեր, բացատրություններ, հավաստիացումներ: Միայն թե արջ ապերը դեռ սպասում էր ու մտածում՝ էլի՞ իրեն կմնա այն, ինչ մնում է խաբվածին՝ հողի կոշտուկն ու փոշին: Եթե միայն իրենց ասածները լսեիր ու կարդայիր, կարող էիր մտածել, թե մեր արջերն արդեն Շվեյցարիայի անտառներում են ապրում եւ մեղր ու տանձ են վայելում: Երկրորդ օրն արդեն վաճառողը նրան չզեկուցեց, թե ՀՆԱ-ն քանի տոկոսով է աճել, պարզապես ասաց. «Ապրանքը թանկացել է»: Հաշվեց դրամները, չիմացավ՝ դե՞ղ գնի, թե՞ տավարի փափկամիս: Հասկացավ, որ իր թոշակը վիճակագրություն չի կարդում: Անտառի կենդանիներն օրեր անց հարցրին. «Ապեր, երրորդ անգա՞մ խաբվեցիր: Եթե ծառը պտուղ չի տալիս, անո՞ւնն են փոխում, թե՞ ծառը»: Արջն ասաց. «Չգիտեմ՝ հավատացի՞, թե՞ պարզապես հոգնել էի չհավատալուց»:

Այդ ձմեռ անտառում աղմուկը շատ էր, մեղրը՝ քիչ: Գայլերն ավելի համարձակ էին դարձել, փեթակները դատարկվել էին, իսկ արջ ապերը հաշվարկում էր՝ ձմեռը հանելու կհերիքի՞ իր ճարպը, թե՞ պիտի պաշտոնական հաղորդագրություններով սնվի:

Ընտրություններից առաջ խոստումներ են տրվում՝ խաղաղություն, անվտանգություն, արժանապատիվ կյանք, տնտեսական աճ, արդարություն: Ոչ ոք չի ասում, որ արջերը կկորցնեն, իսկ իշխանությունը կշահի: Բայց տարիներ անց արջն սկսում է հաշվել ոչ թե խոսքերը, այլ՝ արդյունքները: Եթե սահմանն անապահով է, դրա հետեւանքն առաջինը կրում է սահմանամերձ արջը: Եթե տնտեսությունը դժվարությունների մեջ է, բեռը կրում է հասարակ արջը: Եթե արտաքին քաղաքական հաշվարկը չի արդարանում, դրա հետեւանքները զգում է անտառը:

Առակները չեն ծերանում: Ծերանում են միայն այն արջերը, որոնք ամեն ընտրությունից առաջ հավատում են, թե այս անգամ գյուղացին ուրիշ մարդ է: Խնկո Ապերն ամենակարեւոր նախազգուշացումն արդեն գրել էր. ոչ միայն լսել «բերքը կկիսենք» խոստումը, այլեւ պարզել ու հասկանալ, թե ինչն է կիսվելու, ով է սահմանելու բաժանման կանոնը եւ ով է կրելու հետեւանքները:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Կորել է

Խաչատրյան Արտյոմի՝ Երեւանի պետական կոնսերվատորիայի դիպլոմը՝ 1989թ.-ին տրված, համարը՝ TB – I – N059880:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 15.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉՈ՞Ւ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԸ

Ռուբեն Մաթեւոսյանի Մեսրոպը երբ անտառում թիկունքին զգում է արջի շնչառությունը, իսկ ուսերին՝ նրա թաթերի ծանրությունը, հիշելով հնուց եկած իմաստությունը, թե արջից ազատվելու միակ միջոցը նրա ամործիներից բռնելն է, ձեռքը տանում է արջի ամործիներին, եւ այս տեսարանին հետեւում է մաթեւոսյանական հանճարեղ միտքը՝ «իմ արջը քած էր…»:

Սպանված առյուծը էգ էր: Մեր պետականության սիմվոլ առյուծը որձ է:

Առյուծը հայոց համար եղել է Այրարատյան թագավորության զինանշանը, Խալդի Աստծո պատկերագրության մեջ օծին հաղթողը, եղել է Կիլիկիո զինանշանը՝ խաչը ձեռքին (հրբեւ խաչակրաց արշավանքների մասնակից):

Կիլիկիայի առյուծն այսօր հսկում է Սան Մարինոյի հրապարակը:

Առյուծը եղել է եւ «Է» Հայաստանի առաջին եւ երրորդ հանրապետությունների զինանշաններում:

Լուսնապաշտ կախարդների օրենքներով նախ սպանում են սիմվոլը, ապա վերացնում կրողին: Բայց, ինչպես միշտ, նորելուկ ցեղը երբեք չի կարող հաղորդակցվել տիեզերական ճշմարտություններին. կենդանական աշխարհը, որն ավելի շատ բան գիտի մարդու մասին, քան մարդն ինքը, մեռած թե կենդանի, էներգետիկ դաշտում անգամ վրիժառու է իր տիրոջ համար:

Սա՝ իմիջիայլոց: Իսկ տրամաբանական վարկածը՝ Գագիկ Ծառուկյանի դեմ սկսված տոտալ պատերազմի վերաբերյալ, ամենեւին էլ երեք մանդատի համար կռիվը չէ: Միամտություն է մտածելը, թե ՔՊ-ն այդ ձայները չէր կարող հայթայթել մեկ այլ, թեկուզ ավելի ապօրինի տարբերակով: Ձայնի блеф-ը քողարկեց ՔՊ-ի համար կանխատեսելի ամենամեծ վտանգը՝ Գագիկ Ծառուկյան անձի վտանգը՝ հասարակական կարծիքի ձեւավորումը իրենց տնտեսագիտական տգիտության դեմ:

Մարդ, որն օրգանապես անբաժանելի մաս է կազմում Հայաստանի տնտեսագիտական-ֆինանսական վայրիվերումներին՝ մեր էկոնոմիկայի յուրաքանչյուր նյարդի ու գործի հետ: Գագիկ Ծառուկյանը ուղնուծուծով հայ ազգային տնտեսվարողի որակ է: Նրա մուտքն ԱԺ դառնալու էր սկիզբը, որ մենք ունենայինք ամենաիրական, ամենակարող կառավարչի թեկնածու: Ես այդպես եմ մտածում...

Հասմիկ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Գյումրի

Նախիրը՝ միջպետական ավտոճանապարհին

Դիլիջան համայնքի տարածքում, միջպետական ավտոճանապարհին պարբերաբար հայտնվում են առանց հսկողության թողնված ձիերի երամակներ, կովերի նախիրներ: Դրանք խանգարում են տրանսպորտային միջոցների երթեւեկությանը, վթարային իրավիճակներ ստեղծում: Նախկին տարիներին Դիլիջան համայնքի վարչական տարածքում կովերի, ձիերի հետ բախումներից ավտոմեքենաների վթարներ են եղել, տուժածներ կան: Հուլիսի 13-ին, ժամը 18-ի սահմաններում ականատես եղա, որ միջպետական ավտոճանապարհի Դիլիջան համայնքի Հովք գյուղի հատվածում եւ Դիլիջան քաղաքի հյուսիսային ծայրին՝ «Գետափ» ռեստորանային համալիրի մոտ, նախիրը հայտնվել էր միջպետական ավտոճանապարհի երթեւեկելի մասում, կենդանիները խանգարում էին ավտոմեքենաների տեղաշարժին: Վարորդները հայհոյում էին, ճանապարհը բացող չկար, մարդիկ ուշանում էին: Այս խնդիրը վաղուց կա, սակայն այն ոչ մեկին չի հետաքրքրում, որեւէ լուծում չեն տալիս: Դիլիջանը կարծես Հնդկաստանն է, որտեղ կովերը սրբազան կենդանի են համարվում, որոնց չի կարելի դիպչել, անհանգստացնել, եւ նրանք հաճախ հայտնվում են ճանապարհի բանուկ հատվածներում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am